ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՔԱՅԼ ԲՈՒՀԻՑ ԴԵՊԻ ԴՊՐՈՑ...

Հիմնաբառեր. *կրթական բազմաստիճան համակարգ, կենցաղային տնտեսագիտության այբբենարան, նախաբուհական ուսուցանում, դասարան-գրասենյակ, էլեկտրոնային ինքնակրթություն*

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Հեղինակ է մեկ տասնյակ գիտական հոդվածների և մենագրության:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերը, հախուռն ու հաճախ անկառավարելի տեղեկատվական հոսքերը դեպի մարդ անհատն այսօր ստիպում են ոչ միայն ընթացիկ շտկումներ, այլև խորքային փոփոխություններ կատարել կրթական բազմաստիճան համակարգի ամբողջական շղթայում:

Համակարգի զարգացման միտումներն ու համաշխարհային փորձը ցույց են տալիս, որ այդ տիրույթի առաջին աստիճանում, այսինքն՝ դպրոցական մակարդակում մատուցվող նոր որակի ու ձևաչափի կրթությունն ըստ էության այլընտրանք չունի, ուստի առանց դրա հնարավոր չէ իրականացնել հաջորդող կրթական աստիճանների վերափոխում ու հարմարեցում՝ որպես արդյունավետ բուհական կրթության կարևոր մեկնակետ:

«Տնտեսագիտություն» առարկայի օրինակով փորձ է արվել վերլուծելու խնդրի էությունը և ներկայացնելու դպրոցներում դասավանդվող այս առարկայի մատուցման ձևաչափի փոփոխության առաջարկի գաղափար, հաշվի առնելով, որ այսօրվա աշակերտը ցանցային որոնողական բազում հարթակներում արդեն իսկ ինքնակրթման բավարար փիրույթ ունի և այնտեղ է հայտնվում առանց որևէ մեկի միջնորդության ու թույլտվության, որը, սակայն, ունենալով որոշակի դրական երանգներ, իր մեջ կրում է կրթության ձևախեղման ռիսկեր:

Իբրև այս խնդրի լուծման շահագրգիռ կողմ՝ պետք է հանդես գա մասնագիտական բուհական համակարգը, քայլ անելով դեպի դպրոց, որպեսզի աշակերտը բուհական մասնագիտություն ընտրելիս տնտեսագիտական ուղղությունները չդիտարկի մնացորդային ընտրանքի տիրույթում:

Ապրող դարի 90-ականներից սկսած՝ իրողությունների փոփոխությունները ստիպեցին և այսօր էլ ստիպում են կրթական բազմաստիճան համակարգի ամբողջական շղթայում կատարել ոչ միայն ընթացիկ շտկումներ, այլև խորքային ու բովանդակային ձևափոխումներ:

Բարձր տեխնոլոգիաների զարգացման տեմպերը, հախուռն ու հաճախ անկառավարելի տեղեկատվական հոսքը դեպի անհատը կրթական ոլորտի պատասխանատուների ուշադրությունը սևեռել են ոչ միայն ավանդական առակաների դասավանդման, դրանց կառուցվածքային փոփոխության, այլև աշակերտների ինքնաբացահայտման, ինքնակատարելագործման ու ժամանակի միտումներին համարժեք հմտությունների ձեռքբերման հիմնախնդիրների վրա, քանի որ մերօրյա իրողություններն իր մեջ կրող աշխատաշուկան, մարդու կարողությունների, դրանց արդյունավետ արտահայտման ու կիրառման առումով, ունի հստակ ձևավորված նոր պահանջարկ:

Կրթական ոլորտի զարգացման միտումներն ու համաշխարհային փորձը ցույց են տալիս, որ ուսուցման բազմաստիճան համակարգի առաջին աստիճանում, այսինքն՝ դպրոցական մակարդակում մատուցվող նոր որակի ու ձևաչափի կրթությունը, ըստ էության, այլընտրանք չունի, և առանց դրա հնարավոր չէ իրականացնել հաջորդող կրթական մակարդակների վերափոխում ու ներդաշնակեցում նոր իրավիճակներին: Հետևապես՝ ժամանակի պահանջն է իրականացնել հայեցակարգային փոփոխություններ դպրոցական առարկայական ծրագրերի և դրանց մատուցման ձևի միացյալ համակարգում, և իհարկե, ոչ թե ուղղակի փորձել «հասնել մարդու, տվյալ դեպքում՝ աշակերտի այլընտրանքային տեղեկացվածության ու ինքնակրթության հետևից», այլ դառնալ նոր որակի կրթության լիիրավ ու լիարժեք մատուցողը:

Այս առումով, պահանջվում է մասնագիտական և սոցիալ-հոգեբանական մոտեցումների ոչ այնքան դյուրին համակցում, քանի որ այսօրվա աշակերտն ապրում է տեղեկատվական բազմաշերտ հոսքերի էլեկտրոնային աշխարհում և, առանց ծնողի կամ մանկավարժի մասնակցության, ըստ էության, կարող է իրեն հուզող հարցերի պատասխանները փնտրել «վիքիպեդիաներում» և այլ էլեկտրոնային որոնողական հարթակներում, որտեղ, ճանաչողականից զատ, առկա է նաև վտանգավոր խեղաթյուրումներով, կասկածելի, անվստահելի սկզբնաղբյուրներից մատուցվող տեղեկատվություն: Այս ամենն իրապես կարող է բացասաբար ազդել տեղեկատվական գործիքներից ազատորեն օգտվող աշակերտի գիտելիքների ձևավորման և հոգեկերտվածքի վրա:

Վերոշարադրյալի համատեքստում փորձենք հասկանալ, թե այսօրվա դպրոցում ինչ տնտեսագիտական գիտելիք է ձեռք բերում աշակերտը:

Տնտեսագիտության մասին տեղեկատվություն, որպես այդպիսին, ներառված է ավագ դպրոցի 10-րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի դասագրքի 4-րդ բաժնում[1]: Այդտեղից աշակերտը ծանոթանում է շուկայական տնտեսագիտության սկզբունքներին, պահանջարկի և առաջարկի ձևավորման, բանկային համակարգի, պետության տնտեսական դերակատարության և միջազգային տնտեսական հարաբերությունների խնդիրներին: Հեղինակների ներկայացրած նյութը համապատասխանում է դասագրքային պահանջներին, սակայն, հաշվի առնելով, որ առարկան ինքնին դասվում է բարդընկալելիների շարքին, ենթադրվում է, որ մասնագիտական պատրաստվածության ու ներկայացման ոչ բավարար փորձառության պարագայում դա, ինչպես նաև դասագրքի մնացյալ բաժիններում (գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն) ներկայացվող նյութը՝ եզրաբանական մեծ և հաճախ դժվարընկալելի «ծանրոցով», կարող է դառնալ անհետաքրքիր

[1] Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. Վարդանյան, Հ. Աղաջանյան, Հասարակագիտություն. դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2009:

և ձանձրալի այն մարդու համար, որը, ինչպես նշեցինք, իր հետաքրքրությունները բավարարում է այլընտրանքային՝ հանրամատչելի տեղեկատվական դաշտի միջոցով:

Հավելենք նաև, որ «Հասարակագիտություն» առարկայի ներկայիս տրամաբանական կառուցվածքը կրել է էական փոփոխություններ, և առկա է որոշակի կառուցվածքային խզում համամատաբար նոր ձևավորված բաժինների միջև: Ըստ էության, հանրակրթական դպրոցի 6-9-րդ դասարաններում դասավանդվող «Պատմություն» առակայի դասագրքեր են «տեղափոխվել» «Հասարակագիտություն» առարկայի հիմնական կորիզ հանդիսացող բաժինները, ինչի արդյունքում տնտեսագիտությունը՝ դպրոցական «փաթեթավորմամբ», սակայն մասնագիտական բարդ հասկացություններով, իրենից անկախ, հայտնվել է իր համար ոչ այնքան «հարազատ» տիրույթում, և խնդիրն այս պարագայում, իհարկե, գրքի հեղինակներին չի վերաբերում: Դա ավելի շատ առնչվում է պատվիրատուի առաջարկած նոր ձևաչափին ու դրանից բխող բովանդակային պահանջներին:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակագիտական գիտելիքի դասավանդումն իրականացվում է հիմնականում պատմության մասնագետ մանկավարժի կողմից, ապա պարզ է դառնում, որ այս բազմաշերտ (գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն) առարկայի ավանդական ձևով մատուցումը, ըստ էության, չի կարող հնարավորություն ընձեռել աշակերտին տրամաբանական ամբողջականության մեջ ընկալելու հասարակագիտական բովանդակ աշխարհը, իսկ տնտեսագիտության ուսումնասիրման պարագայում՝ նաև կատարելու ոչ այդքան բարդ վերլուծական աշխատանքներ, համեմատելու իրավիճակներ, պարզագույն սցենարների կառուցմամբ հմտանալու որոշումներ կայացնելու և դասընկերների հետ դրանք թիմային մտավարժանքների տեսքով իրագործելու առումով:

Հարկ է նշել, որ որոշ ավագ դպրոցներում ներկայում դասավանդվում է «Կիրառական տնտեսագիտություն» առարկան[2], որը դեռևս 2013 թվականին ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանով[3] նախատեսվել էր ուսուցանել հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանում: Մինչդեռ, ինչ-ինչ պատճառներով այն տեղափոխվել է ավագ դպրոցի դասացուցակ, իսկ որպես առարկա, բովանդակային առումով, պահպանել «Հասարակագիտություն» առարկայի «Տնտեսագիտություն» բաժնի կառուցվածքային տրամաբանությունը:

Հավելենք, որ տնտեսագիտական և ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման առումով տարբեր կառույցներ որոշակի քայլեր են կատարում, սակայն դրանք համակարգված բնույթ չեն կրում: Որպես կանոն, իբրև հաղորդակցման միջոց այս դեպքում ընտրվում է ոչ թե անմիջական շփման եղանակը, այլ էլեկտրոնային:

Այսպես՝ ՀՀ կենտրոնական բանկն իր պաշտոնական կայքում ունի ֆինանսական գրագիտության հարթակ ոչ միայն ուսուցչի, այլև ուսանողի և աշակերտի համար: Մասնավորապես՝ աշակերտների համար ներկայացված են ֆինանսական ոլորտի վերաբերյալ նկարազարդ և շարժական նյութեր[4]: Դպրոցականների համար տեղեկատվական և ուսուցողական հետաքրքրական տիրույթ ունի նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքը՝ «Վիճակագրություն դպրոցականի համար» գրքույկի տեսքով[5]: Ֆինանսական կրթական հարթակ ունի Ֆինանսական հաշտարարի գրասենյակի պաշտոնական կայքը[6], որը, սակայն, նախատեսված է տարիքային ավելի բարձր խմբերի համար:

[2] https://lib.armedu.am/resource/2057
[3] Նույն տեղում:
[4] Առավել մանրամասն տես https://abcfinance.am/ifme/pupil.html
[5] https://www.armstat.am/file/article/school_book_2019_.pdf

Այսօր, երբ «ֆորս մաժորները» դադարում են մնալ որպես իրավական փաստաթղթերում ամրագրված իրավիճակային սահմանումների հավաքածու, երբ ճգնաժամային կառավարումը դարձել է կառավարման անբաժան բաղադրիչ, երբ «սև կարապների»[7] գործոնն ավելի հաճախակի է հայտնվում տնտեսության ցանկացած ոլորտում, և երբ ինքնուրույն որոշումներ ընդունելու ու դրանք իրականացնելու ունակության գինն ու արժեքն էականորեն բարձրացել են, առավել քան ակնառու է դառնում տնտեսագիտության նախաբուհական ուսուցանումը ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու մարտահրավերի ընդունումը: Այն, իր հերթին, հանրակրթական դպրոցներում հնարավորություն կընձեռի խաղային սցենարների և թիմային դերաբաշխման միջոցով աշակերտին հմտացնելու նախ՝ պարզ, ապա նաև որոշակի բարդություն պարունակող իրավիճակներում ինքնուրույն վերլուծություններ կատարելուն, արագ որոշումներ կայացնելուն և դրանք հնարավորինս արդյունավետ կերպով իրականացնելուն:

Եվ հենց այստեղ է, որ բուհը, որպես շահագրգիռ կառույց, նպատակային և գիտակցված քայլ պետք է անի դեպի դպրոց՝ իր մասնագիտական ներուժով միանալով դպրոցի մանկավարժական թիմին, օժանդակելով նրան և համատեղ կրթելով ապագա տնտեսագետին:

Միաժամանակ, կարևոր է, որ անխափան աշխատի «ունքն ուղղելու փոխարեն՝ աչքը չվնասելու» սկզբունքը, քանզի տվյալ դեպքում խոսքը սկզբնական կամ տարրական տնտեսագիտական գիտելիքի, ասել է թե՝ կենցաղային տնտեսագիտության այբուբենի մատուցման մասին է: Նաև անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ այսօր 12-14 տարեկան երեխան արդեն իսկ ունակ է կենցաղային մակարդակում կառավարելու ծնողի կողմից իրեն տրված «ֆինանսական դրամաշնորհը», ինքնուրույն տնօրինելու իր ժամանակը, կատարելու շրջակա միջավայրի յուրօրինակ SWOT վերլուծություն, տարբերակելու «թացը չորից»:

Հետևապես, կարծում ենք, որ ժամանակն է քննարկել տնտեսագիտության մատչելի և «դյուրամարս» մատուցման հնարավորությունը ոչ միայն ավագ, այլև հիմնական դպրոցում:

Այսօրվա աշակերտի վարքագծի և ապրելակերպի ուսումնասիրությունից կարող ենք հանգել այն եզրակացության, որ նրա հետաքրքրությունների տիրույթում ոչ թե հասարակական-տնտեսական ֆորմացիաների, սեփականության ձևերի պատմությունն է, այլ շատ ավելի առօրեական հարցեր:

Հարցեր, որոնց պատասխանները նա փնտրում է ընտանեկան, դպրոցական, բակային կամ մեկ այլ միջավայրում: Մասնավորապես՝ նրան հետաքրքրում է, թե ինչ է ազգային դրամը, ինչպես կարելի է առավել արդյունավետ տնօրինել օրվա կամ շաբաթվա կտրվածքով տրված ծնողական «գումար-դրամաշնորհը», ինչու է ապրանքի գինն աճում, ինչու է չինական ապրանքն էժան, ինչ է վարկը կամ դրա տոկոսը, ինչ է ներդրումը, բնակարանային հիպոթեքը, ապահովագրությունը և այլն:

Ինքնին պարզ է, որ այս հարցերի պատասխանները տնտեսագիտությունը տալիս է, բայց պարզ է նաև, որ դրանք, որպես կանոն, աշակերտին հասկանալի չեն, քանի որ մատուցվում են մասնագիտական բարդ տերմինաբանությամբ: Ակնհայտ է, որ անմիջական, խաղարկային, թիմային միջավայրում գլխավոր կամ, թեկուզ, երկրորդային դերակատարմամբ հանդես եկող աշակերտը կարող է ոչ միայն հմտա-

[6] https://www.fsm.am/hy/%D6%86%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%B-D%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%B4/%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/

[7] «Սև կարապ» եզրույթի, ինչպես նաև տեսության հեղինակը Նասիմ Նիկոլաս Թալեբն է, որն իր ««Սև կարապը»: Անկանխատեսելիության նշանի ներքո» գրքում (Талеб. Нассим Николя. «Черный лебедь. Под знаком непредсказуемости». КоЛибри. (2015)), ուսումնասիրում է դժվարկանխատեսելի և հազվագյուտ այն իրադարձությունների էությունը, որոնք առաջացնում են շատ զգալի և հաճախ աղետալի հետևանքներ տնտեսության և ոլորտների վրա:

նալ տնտեսագիտական պարզ այբուբենն ընկալելու առումով, այլև հետաքրքրվել, ինչու՞ չէ, նաև նախընտրել տնտեսագիտությունը, այսինքն՝ բարձրագույն կրթություն ստանալու համար կատարել գիտակից ու թիրախավորված ընտրություն հենց այդ ուղղությամբ:

Հետևաբար՝ արդյո՞ք ավելի նպատակահարմար չէ այդ ամենը կիրառել դպրոցում՝ ստեղծելով ազատ ու անկաշկանդ միջավայր՝ յուրօրինակ դասարան-գրասենյակ, որտեղ ապագա ֆինանսիստի, կառավարչի, շուկայագետի կերպարով հանդես եկող աշակերտը հնարավորություն կունենա ձեռք բերելու որոշումներ կայացնելու ու թիմային աշխատանք իրականացնելու հմտություններ, այլ ոչ թե գործընթացը կրկին տանել տնային պարտադրված ընթերցանության ու հանձնարարված նյութն «անգիր անելու» անարդյունավետ ճանապարհով:

Համոզված ենք, որ «Տնտեսագիտություն» առարկայի նմանօրինակ մատուցումը հնարավորություն կընձեռի աշակերտի մեջ զարգացնելու տնտեսագիտական մտածելակերպ, մշակույթ, ինչպես նաև կհանգեցնի պարզ տնտեսագիտական կարողությունների ու տվյալ տարիքի համար ընկալելի փորձի ձևավորմանը:

Հետևաբար՝ հասունացել է ժամանակը քննարկելու և մշակելու կենցաղային տնտեսագիտության «այբբենարան» կամ մտավարժանք դաս-խաղերի տեսքով՝ առավել մատչելի ու պարզ մատուցմամբ հանրակրթական և ավագ դպրոցներում դասավանդելու այնպիսի մի ծրագիր, որն իր մեջ կներառի ժամանակի մարտահրավերներն ու այսօրվա աշակերտի հետաքրքրությունների հնարավորինս ամբողջական «ներկապնակը»:

Հակառակ դեպքում, իրերի ներկայիս դրվածքի պարագայում, կարող ենք ունենալ տվյալ առարկայի և մասնագիտական ոլորտի նկատմամբ անհաղորդ ու անտարբեր աշակերտների թվային աճ, ուսումնական գործընթացի ծանր ու ոչ գործնական մթնոլորտ, որի հետևանքով բուհական մասնագիտություն ընտրելիս տնտեսագիտական ուղղությունները կհայտնվեն մնացորդային ընտրանքի տիրույթում:

Անհրաժեշտ է հայեցակարգային փոփոխություն՝ տվյալ դպրոցական առարկայի մատուցման ձևի ու ձևաչափի առումով, որի հիմնական շահագրգիռ կողմերից մեկը տրամաբանորեն պետք է լինի հստակ մասնագիտական ուղղվածություն ունեցող բուհը: Ակներև է, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ համատեղ, պետք է հանդես գա որպես դպրոցից բուհ ճանապարհին այսօրվա աշակերտի և ապագա ուսանողի կողմից կատարվող գիտակցված ընտրությանը նպաստող թիվ մեկ շահագրգիռ կողմ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը նպատակային ու գործնական քայլերով ՀՀ կրթության, գիտության մշակույթի ու սպորտի նախարարությանը պետք է ներկայացնի հստակ ճանապարհային քարտեզ և համապարփակ ծրագիր՝ միտված հանրապետության հիմնական և ավագ դպրոցներում տնտեսագիտական գիտելիքների արդյունավետ մատուցմանը, ինչպես նաև առարկան մատչելի, գրավիչ ու ընկալելի դարձնելու կարևոր առաքելության իրականացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Վարդանյան Կ., Աղաջանյան Հ., Հասարակագիտություն. դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2009:
2. Талеб Нассим Николя, Черный лебедь. Под знаком непредсказуемости, КоЛибри. 2015.
3. https://www.armstat.am/file/article/school_book_2019.pdf
4. https://lib.armedu.am/resource/2057
5. https://abcfinance.am/ifme/pupil.html
6. https://www.fsm.am/hy

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра "Амберд", АГЭУ,
кандидат экономических наук

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ЭКОНОМИКА: ШАГ ИЗ ВУЗА В ШКОЛУ...

Темпы развития информационных технологий и зачастую неконтролируемые потоки информации диктуют вносить не только текущие, но и глубокие изменения во всей цепочке междисциплинарных систем образования.

Тенденции развития многоуровневой образовательной системы и мировой опыт показывают, что на первом, то есть на школьном уровне, образование нового качества по сути не имеет себе альтернатив и без него в принципе невозможно преобразовать и адаптировать последующие степени.

На примере школьного предмета по экономике предпринята попытка проанализировать суть проблемы, предложена идея альтернативного формата преподавания этого предмета в школах, учитывая тот факт, что у сегодняшнего ученика уже есть достаточный доступ для электронного самообучения на разных поисковых платформах, которыми он пользуется без посредничества и разрешения кого-либо. Но надо учитывать и то, что особенно для школьного возраста, электронное самообучение несет в себе достаточные риски и может довести до искажения психологии и сущности образования.

Заинтересованной стороной и активным участником решения этой проблемы должен быть субъект профессионального высшего образования, который своим целевым и новаторским шагом должен идти навстречу школе, чтобы будущий студент не рассматривал высшее экономическое образование в области остаточной выборки при поступлении в вуз.

Ключевые слова: *многоуровневая образовательная система, азбука бытовой экономики, довузовское образование, классная комната-офис, электронное самообучение*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

ECONOMICS: A STEP FROM A UNIVERSITY TO A SCHOOL...

The pace of development of information technologies, the medley and often uncontrolled flows of information force to make not only current adjustments but also profound changes in the entire multidisciplinary education system.

System development trends and worldwide experience show that at the first level of the education system /that is the school level/ education with new quality and new format has essentially no alternatives, and without it, it is not possible to build and adapt subsequent educational degrees, which can be an important starting point for effective higher education.

Using the example of a school subject in economics, an attempt was made to analyze the essence of the problem and the idea of an alternative format for teaching this subject in schools was proposed, taking into account the fact that today's student already has sufficient access to electronic self-study in various search platforms without anyone's mediation and permission. But it should be borne in mind that especially for school age, electronic self-education carries sufficient risks and can lead to a distortion of education system.

An interested party and an active participant in solving this problem should be the system of professional higher education, with its targeted and innovative step towards the school, so that the future student does not consider economic education as a residual sampling when entering a university.

Keywords: *multilevel educational system, alphabet of household economics, pre-university education, classroom-office, electronic self-training*